ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

ՍԱԼԵԱՆ. Բժ. Արամեան.—Ձեր յօդուածը ստացանք և կը-պենք միւս անգամ։

ՀԱԼԼԷ. Ց. Բոզեան.—«Հակումներ» դրաման ստացանք. կկարդանք և կպատասխանենք։ «Լումայ» կուղարկուի Ձեզ շարունակաբար։

ՇՈՒՇԻ. Ց. Խանլարեան.—«Տխուր պատկեր» բանաստեղծութիւնը չենք կարող տպել։—Միւսները կաշխատենք տպել։ Շարունակեցէք։

ԲԱԳՈՒ. Ա. Զանեան.—«Խակարա-Քարը» կտպուի։

ՂԱԶՈՒԻՆ. Պէրդէս.—«Գիւտ» զաւէշտը ստացանք կկարդանք և կյայտնենք Ձեզ մեր որոշումը։

ՎԵՆՆԱ. Տ. Վ. «Ինքնակոչը» և «Ընդհատուած նախաճաշ» ստացանք. ժամանակին կտպագրենք։

ՇՈՒՇԻ. Պ. Զ. Տուրգենևից Ձեր թարգմանած «Անտառ և տափաստան»-ը ստացել ենք։ Դեռ չենք կարդացել։

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Ք. «Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանի յիշատակին» չի տպուի։

ՄԱՐԲՈՒՐԳ. Մ. Խոստիկեան. Ձեր յօդուածը ստացանք և տը-պագրուելու է, սակայն գրուած է շատ խառը. առհասարակ կխնդրէինք պարզ գրել և մի երեսի վերայ։ «Լումայ» կուղարկուի Ձեզ։

Կ. ՊՕԼԻՍ. * Ձեր առաջին թղթակցութիւնը տպագրեցինք, շարունակել կխնդրուի։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Տ. Տիր. Կոստանեան՝—Ճապոնիայի վերաբերեալ յօդուածները ստացել ենք և կտպենք հետզհետէ։

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Պոպովեան.—Պրոֆ. Պ. Մանտեգացցայի «Ապագայ մարդկութիւն» երկի հայ թարգմանութիւնը ստացանք։ Կկարդանք և կպատասխանենք։ Շատ երկար նիւթեր դժուար է տպագրել ամսագրում. երկար շարունակութիւնները ձանձրալի են դառնում բաժանորդները, իսկ յաւելուածի համար հերթին պիտի սպասէ։

ԹԱՒՐԻԶ. Ա. Ղ.—Մենք ձեզանից սպասում ենք Պարսկահայերի կեանքից յօդուածներ, իսկ դուք ուղարկում էք մեզ Պարսկաստանից... Զեխովից թարգմանութիւններ։

» Ատ. «Բաբիզմի» մասին յօդուածը ուղարկեցէք, սիրով կտպենք։

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Վարդան Զուբարեան.—Ստացանք Ձեր «Մի ակնարկ Խաչատուր Աբովեանի գրականական և հասարակական գործունէութեան» յօդուածը և կտպենք առաջիկայում։

ԹԱՒՐԻԶ. Խ. Աբովեան գրադարան։ Հաճեցէք Ձեր բաժնէգնի 1903 թ. մնացորդը և 1904 թ. ամբողջ բաժանորդագինը 10 ռ. յանձնել մեր աշխ. պ. Վ. Փափազեանցին։

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ԳԱԼ. ԱՂԱՆԵԱՆՑ